Դափ

Հարվածային երաժշտական նվագարան է: Կազմված է փայտե կլոր, ոչ լայն շրջանակից՝ մի կողմը կաշվե թաղանթով պատած: Ներսի կողմից կախված են լինում մետաղե օղեր, բոժոժներ, արծաթադրամներ, ձայնահան այլ պարագաներ: Նվագում են ձեռքերի ափերով, մատներով թաղանթին զարկելով, նաև թափահարելով:

Հայերի, ինչպես նաև կովկասյան մյուս ժողովուրդների շրջանում դափերն անսամբլային նվագարաններ են: Իր բազմազան ձևերով ու անվանումներով կիրառվել և կիրառվում է թե՛ Արևելքի, թե՛ Արևմուտքի ժողովուրդների կենցաղում:

Դափահարը, ըստ էության, դհոլահար է, սակայն դափին ոչ ամեն դհոլահար կարող է տիրապետել: Դափը պահանջում է մատնահարվածների նուրբ զգացողություն և տեխնիկական վարպետություն: